**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**
**ԵՏ-ԲՄԾՁԲ-22/03 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ**
**ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **11.08.2022թ.**

29.07.2022-09.08.2022թթ. ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան 16 հասցեում գտնվող «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ի շենքում, տեղի ունեցավ էլեկտրոնային գնումների և այլ հարակից խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ԵՏ-ԲՄԾՁԲ-22/03 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Զ. Թովմասյան՝ | «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահի տեղակալ; |
| Մ. Երգենյան ՝ | «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ի վարչատնտեսական բաժնի պետ, |
| Ա. Դավթյան՝ | «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ի տրանսպորտի բաժնի պետ, |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Զ. Թովմասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

**ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ**

1. ԵՏ-ԲՄԾՁԲ-22/03 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի, ներկայացված հայտերի բացման, գնահատման, առաջարկված գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:

2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

**1.ԵՏ-ԲՄԾՁԲ-22/03 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտնեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ տեղեկատվությունը:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | գնումների, էլեկտրոնային գնումների և այլ | - |

| | հարակից խորհրդատվական ծառայություններ | |
|---|---|---|

ԵՏ-ԲՄԾՁԲ-22/03 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ի, ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան 16 հասցեում հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2022 թվականի հուլիսի 29-ին, ժամը «09:30»-ին: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ԵՏ-ԲՄԾՁԲ-22/03 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե | Էլ. փոստ |
|---|---|---|---|
| 1 | «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78, 8-րդ հարկ | info@epromotion.am |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

1. Հայտը կազմվել և ներկայացվել է ԵՏ-ԲՄԾՁԲ-22/03 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,
3. Ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին,

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակցի գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի | | | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | անվանում | Զբաղեցրած տեղ | Ընտրված մասնակցի նշում՝ «X» | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1* | գնումների խորհրդատվական և համակարգման ծառայություններ | «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ | - | X | 3600000 | 0 | 3600000 |

*վարվել են բանակցություններ՝ արդյունքները ներկայացված են ստորև

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.
2. Ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆՏՐՎԱԾ և ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, վարվեցին գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցություններ, բանակցությունները տեղի ունեցան 2022թ.ի օգոստոսի 8-ին ժամը 14:00-ին:

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նոր նվազեցված գնային առաջարկ՝ չի ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց.

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

| Չափաբաժնի | | Մասնակցի | | | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | անվանում | Զբաղեցրած տեղ | Ընտրված մասնակցի նշում՝ «X» | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1* | գնումների խորհրդատվական և համակարգման ծառայություններ | «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ | - | X | 3600000 | 0 | 3600000 |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Զ. Թովմասյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Մ. Երգենյան ____________

Ա. Դավթյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________